ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՐԱՄԱՆ № 4-Լ

«20» հոկտեմբերի 2025թ.

ք. Երևան

ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերը, «Դատական դեպարտամենտում ծառայության մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասը, Բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի հուլիսի 12-ի թիվ ԲԴԽ-25-Ո-58 որոշման 1-ին հավելվածի 20-րդ կետի 7-րդ և 25-րդ ենթակետերը, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 17-ի թիվ 01-Ն որոշումը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Սահմանել դատական կարգադրիչների վարքագծի կանոնագիրքը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ն. ԳԱԼՍՏՅԱՆ

Հավելված
Դատական դեպարտամենտի ղեկավարի
2025 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 4-Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԳԻՐՔ
ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Դատական կարգադրիչների վարքագծի կանոնագիրքը (այսուհետ՝ վարքագծի կանոններ) տարածվում է «Դատական դեպարտամենտում ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով դատական կարգադրիչների ծառայության պաշտոն զբաղեցնող քաղաքացիների (այսուհետ՝ դատական կարգադրիչ) վրա:

2. Վարքագծի կանոնները բխում են «Հանրային ծառայության մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված վարքագծի սկզբունքներից, դրանց հիման վրա սահմանված հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոններից և «Դատական դեպարտամենտում ծառայության մասին» օրենքի 62-րդ հոդվածով սահմանված վարքագծի կանոններից, որոնք իրենցից ներկայացնում են դատական կարգադրիչի կողմից որոշակի վարքագծի հետևելու պարտադիր կանոնների համախումբ:

3. Վարքագծի կանոնների նպատակն է սահմանել դատական կարգադրիչի վարքագծի միասնական չափանիշներ՝ ամրապնդելով հանրային ծառայությունում բարոյական մշակույթի զարգացումն ու միասնական բարոյաիրավական հիմքի ստեղծումը, օժանդակել դատական կարգադրիչին բարեվարք վարքագիծ դրսևորելու հարցում՝ ամրապնդելով կոռուպցիայի նկատմամբ զգոնությունն ու անհանդուրժողականությունը և հանրության վստահությունը դատական կարգադրիչի կողմից իրականացվող մասնագիտական գործունեության նկատմամբ:

4. Դատական կարգադրիչը, իր ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում և աշխատանքից դուրս, պարտավոր է հետևել վարքագծի կանոններին: Վարքագծի այն կանոնները, որոնցով ուղղակիորեն նախատեսված է դատական կարգադրիչի պարտականությունը հետևել դրանց ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում, կամ որոնք ուղղակիորեն բխում են ծառայողական պարտականություններից, չեն տարածվում դատական կարգադրիչի՝ աշխատանքից դուրս հարաբերությունների վրա:

2. ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ ԾԱՌԱՅԵԼՈՒ ԳԻՏԱԿՑՈՒՄԸ

6. Դատական կարգադրիչը պարտավոր է իր ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում լինել ազնիվ, պահպանել օրինականության, համաչափության սկզբունքները:

7. Դատական կարգադրիչը պարտավոր է Դատական դեպարտամենտում ծառայություն իրականացնող անձանց և աշխատողների կողմից կոռուպցիոն բնույթի գործողությունների կամ այլ առերևույթ խախտումների մասին իրեն հայտնի դառնալու դեպքում օրենսդրությամբ սահմանված կարգով այդ մասին տեղեկացնել իրավասու պաշտոնատար անձին (մարմնին)՝ հաշվի չառնելով ծառայողական աստիճանակարգությունը կամ գործընկերային հարաբերությունները:

8. Դատական կարգադրիչը պարտավոր է իր ծառայողական պարտականությունները կատարելիս կայացնել հիմնավորված որոշումներ՝ բացառելով խտրականության որևէ դրսևորում:

9. Դատական կարգադրիչների ծառայության ղեկավար պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում իրեն վերապահված լիազորությունների շրջանակում, պաշտպանել իրեն ենթակա ծառայողների և այլ աշխատակիցների օրինական շահերը՝ միջամտելով նրանց հանդեպ ոտնձգության կամ այլ անարդար վերաբերմունքի ցանկացած դրսևորման դեպքում:

10. Դատական կարգադրիչների ծառայության ղեկավար պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում ենթականերին զերծ պահել ոչ հիմնավոր գործողություններ կատարելուց կամ որոշումներ կայացնելուց, աշխատանքային հարաբերություններում բացառել իր կողմից խտրական վարքագծի դրսևորումը, ինչպես նաև վերադասության լիազորության չարաշահումը:

11. Դատական կարգադրիչների ծառայության ղեկավար պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է չտալ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին հակասող, ինչպես նաև իր կամ կատարողի լիազորությունների շրջանակներից դուրս հանձնարարականներ:

12. Դատական կարգադրիչների ծառայության ղեկավար պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է իր ենթակայությամբ աշխատող հանրային ծառայողների և այլ աշխատակիցների կողմից կոռուպցիոն բնույթի գործողությունների և այլ խախտումների վերաբերյալ հաղորդումներ ստանալու դեպքում պարտադիր գործուն քայլեր ձեռնարկել՝ դրանց առնչությամբ հետագա գործողությունների ընթացքն ապահովելու համար:

13. Դատական կարգադրիչների ծառայության ղեկավար պաշտոն զբաղեցնող անձը պետք է ձեռնարկի բոլոր ողջամիտ քայլերն իրեն ենթակա ծառայողների և այլ աշխատակիցների շրջանում Հայաստանի Հանրապետության օրենքների, վարքագծի կանոնների և հանրային ծառայության սկզբունքների մասին իրազեկվածությունն ապահովելու ուղղությամբ, հետևողական լինի դրանց պահպանմանը:

3. ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՅԻՆ ՇԱՀԻՆ

14. Դատական կարգադրիչն իրավունք չունի հանրային շահը ստորադասել անհատների կամ խմբերի մասնավոր շահերին, գործել ի վնաս պետության, կախվածության մեջ դնել ծառայողական պարտականությունների կատարումն անձնական շահագրգռվածությունից:

15. Դատական կարգադրիչը պարտավոր է՝

1) լինել անաչառ և իր ծառայողական պարտականությունները կատարելիս գործել բացառապես հանրային շահից ելնելով.

2) ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններ կատարելուց, որոնք վարկաբեկում կամ նսեմացնում են հանրային ծառայությունը կամ իր աշխատավայրը հանդիսացող պետական մարմնի հեղինակությունը.

3) ձեռնպահ մնալ անձնական խոստում տալուց կամ այնպիսի գործողություններ կատարելուց կամ իր իրավասության շրջանակներից դուրս այնպիսի խոստումներ տալուց, որոնք ողջամտորեն ստեղծում են պետական համապատասխան մարմնի կողմից գործունեության որոշակի ուղղություն որդեգրելու տպավորություն.

4) ձեռնպահ մնալ մասնավոր նպատակների համար որևէ ազդեցություն ձեռք բերելուն ուղղված գործողություններ կատարելուց, այդ թվում՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով իր կամ այլ անձի կամ կազմակերպության որևէ արտոնություն տրամադրելով կամ այդպիսիք տրամադրելու խոստումներ տալով.

5) համագործակցել իր գործընկերների հետ և ծառայողական պարտականությունները կատարելիս գործել թափանցիկ.

6) ձեռնպահ մնալ ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկատվությունը բացահայտելուց, չճշտված կամ ոչ հավաստի տեղեկություններ տարածելուց, այլ նպատակներով չօգտագործել, չհրապարակել կամ այլ կերպ մատչելի չդարձնել (այդ թվում՝ պաշտոնից ազատվելուց հետո) պաշտոնեական պարտականությունների իրականացման կապակցությամբ իրեն հայտնի դարձած ոչ հրապարակային տեղեկությունները, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ, իսկ նման տեղեկությունները երրորդ անձանց հասանելի դառնալու դեպքում՝ անմիջապես պաշտոնական հաղորդակցման միջոցներով գրավոր տեղեկացնել իր վերադաս անձին, անմիջական ղեկավարին կամ գաղտնի տեղեկությունների պահպանությունն իրականացնող ստորաբաժանման ղեկավարին.

7) օրինական հիմքերով տեղեկատվություն հայցողներին տրամադրել օրենսդրությամբ սահմանված տեղեկատվությունը՝ իր իրավասության սահմաններում ապահովելով իր և իր աշխատավայրը հանդիսացող պետական մարմնի գործունեության թափանցիկությունը:

4. ԲԱՐԵԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՐԳԱԼԻՐՈՒԹՅՈՒՆԸ

16. Դատական կարգադրիչը պարտավոր է հարգել Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշները:

17. Դատական կարգադրիչը պարտավոր է ձեռնպահ մնալ ծառայողական գործունեության համար նախատեսված տարածքներում Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշներից, պետական մարմինների՝ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված խորհրդանիշներից ու տարբերանշաններից, լիազոր մարմինների կողմից ընդունված արարողակարգային խորհրդանիշներից և տարբերանշաններից, օտարերկրյա պատվիրակությունների հետ հանդիպումների ընթացքում՝ այդ պետությունների պետական խորհրդանիշներից, միջազգային կառույցների հետ հանդիպումների ընթացքում՝ այդ կառույցների խորհրդանիշներից ու տարբերանշաններից բացի որևէ այլ խորհրդանիշի կամ տարբերանշանի ցուցադրումից:

18. Դատական կարգադրիչը պարտավոր է պահպանել «Լեզվի մասին» օրենքով սահմանված լեզվական պարտականությունը:

19. Դատական կարգադրիչը պարտավոր է ձեռնպահ մնալ այնպիսի վարքագիծ դրսևորելուց, որը կարող է ողջամտորեն ընկալվել որպես անհարգալից վերաբերմունք քաղաքացիների, ղեկավարների, ենթակաների կամ այլ գործընկերների նկատմամբ:

20. Դատական կարգադրիչը պարտավոր է իր աշխատավայրը հանդիսացող պետական մարմնի վերաբերյալ քննադատական մտահոգություններ արտահայտելիս լինել հարգալից և զուսպ:

21. Դատական կարգադրիչը պարտավոր է ցանկացած պայմաններում և իրավիճակներում լինել բարեկիրթ, բարեվարք, գործնական, մասնագիտական և բարոյական հատկանիշներով, զերծ մնալ հանրային ծառայության հեղինակությունը վարկաբեկող, հանրային ծառայության նկատմամբ հանրության վստահությունը նվազեցնող կամ հանրային ծառայողի անկողմնակալության, անաչառության և անկախության նկատմամբ կասկած հարուցող վարքագիծ դրսևորելուց:

22. Դատական կարգադրիչը պարտավոր է ծառայողական պարտականությունները կատարելիս՝ այլ անձանց հետ հաղորդակցության ժամանակ, այդ թվում՝ նամակագրությամբ կամ հեռախոսով հաղորդակցվելիս ցանկացած իրավիճակում ցուցաբերել զսպվածություն, հավասարակշռվածություն և հարգալիրություն:

23. Դատական կարգադրիչը պարտավոր է ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում խուսափել կոնֆլիկտային իրավիճակներից, իսկ այդպիսիք առաջանալու դեպքում՝ պահպանել հանգստություն, բարեկրթություն:

24. Դատական կարգադրիչը պարտավոր է հարգել Դատական դեպարտամենտում ծառայություն իրականացնող անձանց, աշխատողների և

հասարակության բոլոր անդամների արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները:

25. Գործընկերների հետ հարաբերություններում դատական կարգադրիչը պարտավոր է ցուցաբերել հարգանք և բարեկրթություն՝ թույլ չտալով այնպիսի վարքագիծ, որը վնասում է անհատի արժանապատվությունն ու իրավունքները կամ ստեղծում է այնպիսի իրավիճակ, որը խոչընդոտում է ծառայողական պարտականությունների կատարման արդյունավետությանը:

26. Դատական կարգադրիչը պարտավոր է հարգել իր գործընկերների խոսքի ազատության իրավունքը, գործընկերոջ վերաբերյալ քննադատություն արտահայտել միայն նրա ներկայությամբ՝ պարզաբանելով բոլոր հիմքերը, և գործընկերների միջև հարաբերություններում բացառել խտրականության որևէ դրսևորում:

27. Դատական կարգադրիչը պարտավոր է ձեռնպահ մնալ հանրային ծառայության համակարգում պաշտոն զբաղեցնելու հանգամանքով պայմանավորված որևէ մեկի նկատմամբ արտոնյալ վերաբերմունք դրսևորելուց, ինչպիսի վերաբերմունք ողջամտորեն չէր դրսևորվի պաշտոն չզբաղեցնող անձի նկատմամբ:

28. Բացառությամբ «Դատական դեպարտամենտում ծառայության մասին» օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 55-59-րդ հոդվածներով նախատեսված դեպքերի՝ դատական կարգադրիչը իր ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում պարտավոր է չգործադրել ֆիզիկական ուժ կամ դրա վերաբերյալ սպառնալիք չներկայացնել, ինչպես նաև չգործադրել հոգեբանական բռնություն:

29. Դատական կարգադրիչին արգելվում է թմրամիջոցներ կամ հոգեներգործուն նյութեր օգտագործել, բացառությամբ՝ օրինական բժշկական նպատակներով օգտագործման կամ ոգելից խմիչքների, թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ազդեցության տակ աշխատավայրում գտնվել:

30. Դատական կարգադրիչին արգելվում է աշխատանքի վայրում ծխել՝ բացառությամբ ծխելու համար սահմանված տարածքների, ինչպես նաև խախտել հրդեհային անվտանգության և սանիտարական նորմերն ու կանոնները:

31. Դատական կարգադրիչը պարտավոր է զերծ մնալ ցանկացած տեսակի, այդ թվում՝ սեռական ոտնձգության դրսևորումներից կամ նման տպավորություն ստեղծելուց:

32. Ղեկավար պաշտոններ զբաղեցնող դատական կարգադրիչները պարտավոր են ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ իրենց ենթակաների շրջանում կոնֆլիկտային իրավիճակները հաղթահարելու համար:

5. ԲԱՐԵԽՂՃՈՒԹՅՈՒՆԸ

33. Դատական կարգադրիչը պարտավոր է ազնվորեն և բարեխղճորեն կատարել իր ծառայողական պարտականությունները և չհրաժարվել դրանց կատարումից՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

34. Դատական կարգադրիչը պարտավոր է իր աշխատաժամանակը չօգտագործել իր պաշտոնեական լիազորություններից դուրս այլ գործողություններ կատարելու համար, եթե կիրառելի նորմերին համապատասխան այլ բան չի համաձայնեցվել իր վերադասի կամ անմիջական ղեկավարի հետ:

35. Դատական կարգադրիչը պարտավոր է ձեռնպահ մնալ ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում ստացված տեղեկատվությունն անձնական օգուտ կամ առավելություն ստանալու նպատակով օգտագործելուց:

36. Դատական կարգադրիչը պարտավոր է մասնավոր զրույցների, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման հետ չկապված այլ իրավիճակներում չբացահայտել ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկատվությունը:

37. Դատական կարգադրիչը պարտավոր է միջոցներ ձեռնարկել, որպեսզի իր ստեղծագործական, գիտական, կրթական գործունեությունը բացասաբար չազդի իր առաջնահերթ և հիմնական պարտականությունների կատարման վրա:

38. Դատական կարգադրիչը պարտավոր է արդյունավետորեն և խնայողաբար օգտագործել հանրային ռեսուրսները, այդ թվում՝ ծառայողական գույքը, ինչպես նաև չօգտագործել դրանք սեփական շահերը բավարարելու կամ այլ անձնական նպատակներով:

6. ՕԲՅԵԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ

39. Դատական կարգադրիչը պարտավոր է խուսափել ցանկացած հովանավորչությունից: Դատական կարգադրիչը պարտավոր է ձեռնպահ մնալ իր զբաղեցրած պաշտոնով պայմանավորված որևէ առավելություն ստանալուց:

7. ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

41. Դատական կարգադրիչը պարտավոր է դրսևորել քաղաքական զսպվածություն: Դատական կարգադրիչի քաղաքական զսպվածությունը ենթադրում է՝

1) խուսափել հանրային հարթակներում քաղաքական կողմնորոշում ունեցող այնպիսի հոդվածներ, տեսակետներ հրապարակելուց, որոնք կխաթարեն հանրային ծառայության անկողմնակալությունը.

2) ձեռնպահ մնալ որևէ կուսակցության օգտին կամ դեմ այնպիսի քարոզ իրականացնելուց, որը խաթարում է հանրային իշխանության անաչառությունը և հեղինակությունը.

3) Դատական կարգադրիչը պարտավոր է ձեռնպահ մնալ իր պաշտոնեական դիրքը որևէ կուսակցության համար արտոնություններ ստանալու նպատակով օգտագործելուց:

42. Դատական կարգադրիչը քաղաքական գործունեության ընթացքում պարտավոր է ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են ողջամտորեն կասկածի տակ դնել իր՝ որպես հանրային ծառայողի կամ իր աշխատավայրը հանդիսացող հանրային իշխանության մարմնի կամ առհասարակ հանրային իշխանության անկողմնակալությունը:

43. Դատական կարգադրիչը քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հարաբերություններում, ինչպես նաև մյուս ծառայողների հետ հարաբերություններում չպետք է անհարկի նշի իր անդամակցության մասին որևէ կուսակցությանը՝ նպատակ ունենալով ստանալ որևէ անձնական շահ, արտոնություն, առավելություն:

8. ՆՎԵՐՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԱՐԳԵԼՔԸ

44. Դատական կարգադրիչը պարտավոր է ձեռնպահ մնալ՝

1) իր կամ իր հետ փոխկապակցված անձի համար Օրենքի իմաստով նվեր պահանջելուց կամ ստանալուց, որն ազդում է կամ կարող է ազդել իր կողմից ընդունվող որոշումների վրա.

2) Օրենքի իմաստով այնպիսի նվերների ընդունումից, որոնք կարող են ողջամտորեն ընկալվել որպես փոխհատուցում իր ծառայողական պարտականություններով պայմանավորված գործողությունների համար կամ որևէ կերպ պայմանավորել իր ծառայողական պարտականություններից բխող գործողությունների ելքը.

45. Դատական կարգադրիչը պարտավոր է բոլոր դեպքերում, բացառությամբ՝ սահմանված շեմը չգերազանցող արժեք ունեցող թույլատրելի նվերների, վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին պաշտոնական հաղորդակցման միջոցներով գրավոր տեղեկացնել ստացված նվերի, այդ թվում՝ ոչ նյութական առավելության մասին:

9. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄԸ

46. Դատական կարգադրիչը պարտավոր է իր ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում խուսափել այնպիսի հարաբերություններից, որոնք առաջացնում են կամ կարող են առաջացնել շահերի բախում, կամ որոնց առկայության պայմաններում դատական կարգադրիչը հնարավորություն չի ունենա անաչառ և անկողմնակալ կատարելու իր պարտականությունները:

47. Դատական կարգադրիչը պարտավոր է իր ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում խուսափել այնպիսի գործողություն կատարելուց կամ որոշում կայացնելուց, որը ողջամտորեն կարող է մեկնաբանվել

որպես ուղղակի կամ անուղղակի անձնական շահով կամ Օրենքի իմաստով՝ առաջնորդվել իր հետ փոխկապակցված անձի շահով:

48. Դատական կարգադրիչը պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ կամ գործողություններ իր անձնական շահերի և իր պաշտոնից ու հանրային ծառայողի կարգավիճակից բխող շահերի միջև հնարավոր բախումը կանխելու համար:

49. Դատական կարգադրիչը պարտավոր է ցանկացած շահերի բախման դեպքում այդ մասին տեղեկացնել իր վերադասին կամ անմիջական ղեկավարին:

10. ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՉՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

50. Դատական կարգադրիչը պարտավոր է պահպանել ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում իրեն հայտնի դարձած՝ օրենքով պահպանվող տեղեկություններ պարունակող փաստաթղթերի և նյութերի հետ աշխատելու՝ օրենսդրությամբ սահմանված պահանջները:

51. Դատական կարգադրիչը պարտավոր է պատշաճ կերպով և գաղտնիության, անձնական տվյալների պաշտպանության և անվտանգության կանոնները պահպանելով՝ մշակել և տնօրինել պաշտոնեական լիազորությունների իրականացմամբ պայմանավորված իր տնօրինության տակ հայտնված տվյալները, տեղեկությունները, գաղտնաբառերը և այլն:

52. Դատական կարգադրիչը պարտավոր է ձեռնպահ մնալ իր լիազորությունների կատարմանը չառնչվող պետական կամ ծառայողական գաղտնիքի տեղեկակիրներին, տեղեկություններին, գաղտնաբառերին կամ հատուկ պահպանվող տարածքներին հասանելիություն ստանալուն ուղղված քայլերի ձեռնարկումից, ինչպես նաև առանց թույլտվության դրանց տեղեկակիրների պատճենահանումից, ձայնագրումից, լուսանկարումից կամ տեսագրումից:

53. Դատական կարգադրիչը պարտավոր է իր աշխատանքային և պաշտոնեական պարտականություններից չբխող հետազոտություններում կամ աշխատություններում չօգտագործել այնպիսի տեղեկություններ, որոնք, թեև ենթակա են հրապարակման, սակայն դեռևս չեն հրապարակվել հանրային իշխանության մարմինների կողմից: